ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արարատ համայնք, Ք. Արարատ, Շահումյան 34,
Հեռ. 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

N 2984

23 նոյեմբեր 2023թ.

«ԳՐԻԳ-ՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ու Ց Ում

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Ինչպես գիտեք ս/թ օգոստոսի 24-ին Արարատի համայնքապետարանի և «ԳՐԻԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև կնքված N ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-23/48 պայմանագրով Դուք պարտավորվել եք իրականացնել «Արարատ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ»: Աշխատանքների կատարման համար ժամկետ է սահմանվել 60 օրացույցային օր, կամ մինչև 23.10.2023թ-ն:

2023թ-ի սեպտեմբերի 19-ին, այսինքն մինչև պայմանագրի ժամկետի ավարտը Արարատի համայնքապետարանը Ձեզ գրավոր նախազգուշացրեց աշխատանքների դանդաղ ընթացքի և հնարավոր ռիսկերի մասին, սակայն պայմանագրի կատարման ժամկետը լրացավ և դուք ադպես էլ չկատարեցիք Ձեր պայմանագրային պարտավորությունները, հետևաբար Արարատի համայնքապետարանը, որպես պատվիրատու, հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.4 կետը, միակողմանի լուծում է Արարատի համայնքապետարանի և «ԳՐԻԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 24.08.2023թ-ին կնքված N ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-23/48 պայմանագիրը և պատշաճ ծանուցումն իրականացնելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման Կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք, որ ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքները / կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված համապատասխանաբար 3.635.200 ՀՀ դրամ և 2.425.500 ՀՀ դրամ գումարները՝ Արարատի համայնքապետարանին փոխանցելու նպատակով:

Կքննարկվի նաև «ԳՐԻԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ընկերությունների ցուցակում ներառելու հարցը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ԿԱՏ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Կ. Մելքոնյան